8010	ԸՆԴԱՄԵԼ՝ (տող 8100+տող 8200), (տող 8000 հակառակ կշռանով)		131794.1607	3235.3853	128558.7754
8100	(տող 8110+տող 8160), (տող 8010 - տող 8200)		131794.1607	3235.3853	128558.7754
8110	1.1. Գործառնործություններ (տող 8111+տող 8120)		0.0000	0.0000	0.0000
-8111	1.1.1. Կրթությունը, Կրթությանը բաժնետոմսերը և կապիտալում այլ մասնակցություն (տող 8112+տող 8113)		0.0000	X	0.0000
8112	- բողոքի միջոցով և տեղաբաշխումից մուտքեր	9111	0.0000	X	
8113	- հիմնական զուտարի մուտքում	6111	0.0000	X	
8120	1.2. Վարկեր և փոխառություններ (ստացում և մարում) (տող 8121+տող 8140)		0.0000	0.0000	0.0000
8121	1.2.1. Վարկեր (տող 8122+ տող 8130)		0.0000	X	0.0000
8122	- վարկերի ստացում (տող 8123+ տող 8124)	9112	0.0000	X	0.0000
8123	պետական բյուջեից		0.0000	X	
8124	այլ աղբյուրներից		0.0000	X	
8130	- ստացված վարկերի դրամական զուտարի մարում (տող 8131+ տող 8132)	6112	0.0000	X	0.0000
8131	ՀՀ պետական բյուջեից		0.0000	X	
8132	այլ աղբյուրներից		0.0000	X	
8140	1.2.2. Փոխառություններ (տող 8141+ տող 8150)		0.0000	0.0000	0.0000
8141	1.2.2.1. Փոխառություններ արտասահմանային ստացում (տող 8142+ տող 8143)	9112	0.0000	0.0000	0.0000
8142	ՀՀ պետական բյուջեից		0.0000		X
8143	ՀՀ այլ համայնքների բյուջեներից		0.0000		
8150	- ստացված փոխառությունների զուտարի մարում (տող 8151+ տող 8152)	6112	0.0000	0.0000	0.0000
8151	ՀՀ պետական բյուջեից		0.0000		X
8152	ՀՀ այլ համայնքների բյուջեներից		0.0000		
8160	(տող 8161+տող 8170+տող 8190-տող 8197+տող 8198+տող 8199)		131794.1607	3235.3853	128558.7754
8161	2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն (տող 8162+ տող 8163 + տող 8164)		0.0000	X	0.0000
8162	2.1.1. Կրթությունը, Կրթությանը բաժնետոմսերը և կապիտալում համայնքի մասնակցություն հրացումից մուտքեր	9213	0.0000	X	



8163	կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից բացառությամբ և գաղափարային աշխատանքներ	9213		X		0.0000
8164	մասնակցություն Անոթքերում	6213		X		0.0000
8170	2.2. Փոխափոխություններ (տող 8171+ տող 8172) - նախկինում տրամադրված					0.0000 0.0000 0.0000
8171	փոխափոխությունների դիմաց առացվող	9212				0.0000
8172	- փոխափոխությունների տրամադրում	6212				0.0000
8190	2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեկարգի ազատ մնացորդը՝ (տող 8191+տող 8192)		131794.1607		3235.3853	128558.7754
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչապետ տարի միջոցների տարեկարգի ազատ մնացորդը	9320	77149.0254		77149.0254	X
8192	վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն - ենթակա է ուղղման հասանքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192)		3235.3853		3235.3853	X
8193	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային տարի միջոցների տարեկարգի մնացորդ (տող 8195 + տող 8196)	9330				-73913.6401 X
8194	- անույն վարչապետ տարի սրբոցյուրը		128558.7754			X 128558.7754
8195	տարեկարգի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի		54645.1353			X 54645.1353
8196	վարչապետ տարի սրբոցյուրը ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը (տող 8193)		73913.6401			X 73913.6401
8197	2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում մուտքաների մաս					X X
8198	2.5. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս առանձնացված միջոցների մեծություն					0.0000
8199	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում (տող 8010- տող 8110 - տող 8161 - տող 8170- տող 8190)					0.0000 0.0000
8199 <sup>9</sup>	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեկարգի ազատ մնացորդը					0.0000 X
8200	Բ. ԱՐՏԱՔԻՆ, ԱՂՅՈՒՆԻՆԵՐ (տող 8210)					0.0000 0.0000 0.0000
8210	Բ. ՓՈՆՆԱՅՈՒՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8211-տող 8220)					0.0000 0.0000 0.0000
8211	կապիտալում այլ մասնակցության (տող 8212-տող 8213)					0.0000 X 0.0000
8212	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	9121				0.0000 X
8213	- հիմնական գումարի մարում	6121				0.0000 X
8220	1.2. Վարչապետ և փոխափոխություններ (տող 8220 մարում) (տող 8221+ տող 8230)					0.0000 0.0000 0.0000
8221	1.2.1. Վարկեր (տող 8222+ տող 8230)					0.0000 X 0.0000
8222	- վարկերի ստացում	9122				0.0000 X
8230	- ստացված վարկերի հիմնական գումարի	6122				0.0000 X
8240	1.2.2. Փոխափոխություններ (տող 8241+ տող 8250)					0.0000 0.0000 0.0000
8241	- փոխափոխությունների ստացում	9122				0.0000
8250	- ստացված փոխափոխությունների գումարի	6122				0.0000





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1փող. 23, pam-bak@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 38-Ա

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2022թ-ի I  
ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի  
Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, „Բյուջետային  
համակարգի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին  
մասի 1-ին կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2022թ-ի բյուջեի  
3 ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -14  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ  
ԳԱՄՊԱՐՅԱՆ ԷԼՄԱ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԷԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0      Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

2022թ. Ապրիլի 06  
գ. Փամբակ



**ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**



## ՀԱՂՈՐԴՈՒՄ

### ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակը կատարվել է Ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 117,387,2 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 123682.4 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 94.9%: Ընդ որում՝ Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի վարչական մասով ծրագրված (ճշտված) 123682.4 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 117387,2 հազար դրամ ապահովելով 94.9% կատարողական:

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեով առաջին եռամսյակի սեփական եկամուտները ծրագրվել են 35688.2 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 21527.1 հազար դրամ կամ 60.3%:

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի միջոցների հաշվին իրականացվել է 140113.2 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 54.8%-ը: Հարկ է նշել, որ 2022 թվականի առաջին եռամսյակի ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են: Ստորև ներկայացվում է Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

#### Հարկեր և տուրքեր.

- Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով առաջին եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 14.7 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 100.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 3.7%:
  - Հողի հարկի ապառքի մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 734.8 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 5000.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 14.7%:
  - Անշարժ գույքի հարկի մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 1791.5 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 8477.2 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 21.1%:
  - Գույքահարկ փոխադրամիջոցների մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 11594.3 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 15000.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 77.3%:
  - Տեղական տուրքերի մասով առաջին եռամսյակի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 1559.7 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 2065.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 75.5%:
- Պաշտոնական դրամաշնորհներ.  
Պաշտոնական դրամաշնորհների մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են



87994.4 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 87994.2 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%:

Այլ եկամուտներ.

Փամբակ համայնքի 2022 թվականի բյուջեով առաջին եռամսյակի այլ եկամուտների գծով նախատեսված 5046.0 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքագրվել է 13697.8 հազար դրամ, որից.

- Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 2395.7 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 2500.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 95.8%:

- Այլ գույքի վարձակալությունից մուտքերի մասով փաստացի մուտքերը կազմել են 381.3 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 300.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 127.1%:

- Տեղական վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 2096.2 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 1850.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 113.3%:

- Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 708.2 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 396.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 178.8%:

- Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհների մասով փաստացի մուտքերը կազմել են 7865.7 հազար դրամ,

- Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտների մասով փաստացի մուտքերը կազմել են 250.7 հազար դրամ:

Ծախսեր՝ Փամբակ համայնքի 2022 թվականի առաջին եռամսյակի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 140113.2 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 255476.5

հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 54.8%-ը:

Փամբակ համայնքի 2022 թվականի առաջին եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	66309.0	52984,9	79.9
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ	31735.4	11199,2	35.3



ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	24043.0	21637,7	90
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ	3750.0	0	0
ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ՇԱՀՈՒՅԹ ԶՀԵՏԱՊԵՆՏՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	200.0	0	0
ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՒՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐՔԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՐՔ	740.4	421,4	56.9
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	92046.3	39927,4	43.4
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	45763.0	14,037,3	30.7
ԱՅԼ ՉԻՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	6872.0	1061,0	15.4
ՀՈՂԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-15,982,6	-1,155,7	7.2
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>255476.5</b>	<b>140113,2</b>	<b>54.8</b>

Փամբակ համայնքի 2022 թվականի առաջին եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (6շտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	116555.2	66771,7	57.3
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	101142.2	51976,1	51.4



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	3500.0	295,0	8.4
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	5603.1	668,8	11.9
ՀԱՆԳԻՍՏ, ՍՇԱԿՈՒԹԹ ԵՎ ԿՐՈՆ	12991.0	10468,4	80.6
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	11935.0	9933,2	83.2
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	3750.0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	255476.5	140113,2	54.8

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1փող. 23, pam-bak@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 39-Ն

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02.03.2022թ-ի „ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԼՈՒԾԵԼՈՒ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, ԹԻՎ 19-Ն ՈՐՈՇՈՒՄՆ  
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 37-րդ  
հոդվածով՝ Փամբակ համայնքի ավագանին.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 02.03.2022թ-ի  
„Փամբակ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր  
խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին,, թիվ 19-Ն որոշումը:

Կողմ -14  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄԿԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ  
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՄԱՍՈՒՆ  
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒԺԱ  
ԲՈՋԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

2022թ. Ապրիլի 06  
գ. Փամբակ



**ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, Իփոդ, 23, pam-bak@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 40-Ա

**ԱՇՈՏ ՇԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի "Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով Աշոտ Շաքարյանի հայտը, ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը, Փամբակ համայնքի ավագանին.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Աշոտ Շաքարյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0604-0011 ծածկագրով 0.187142 հազյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության այլ հողատեսքը թոչնանոցի կառուցման և սպասարկման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -14  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ  
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ

Դեմ -0                      Ձեռնպահ -0



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍԱԴԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒԺԱ  
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**  
2022թ. Ապրիլի 06  
գ. Փամբակ



**ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1փող. 23, pam-bak@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 41-Ա

**„ԱՊԱՀՈՎ ՏԱՆԻՔ“ ՍՊԸ-ԻՆ ՓՀԷԿ-Ի ԴԵՐԵՎԱՑԻՈՆ ԽՈՂԱՎԱԿԱՇԱՐԻ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի „Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի տրամադրման,, թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի դ/ ենթակետով, հաշվի առնելով „Ապահով տանիք,, ՍՊԸ-ի գրությունը և Փամբակ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ „Վահագնի,, փոքր ՀԷԿ-ի դերեվացիոն խողովակաշարի անցկացման նպատակով սերվիտուտի իրավունքով հողամաս տրամադրելու մասին՝ Փամբակ համայնքի ավագանին,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Տալ հանաձայնություն „Ապահով տանիք,, ՍՊԸ-ին համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերով „Վահագնի,, փոքր ՀԷԿ-ի դերեվացիոն խողովակաշարի անցկացման նպատակով սերվիտուտի իրավունքով 50 տարի ժամկետով օգտագործման տրամադրելուն:

2. Սերվիտուտի տարեկան վճարի չափը սահմանել.

- 1) 06-102-0040-0019 ծածկագրով 0,04417 հա պետական սեփականություն հանդիսացող այլ հողատեսքի համար 30000 ՀՀ դրամ,
- 2) 06-102-0040-0018 ծածկագրով 0,08266 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքին 0,07576 հա պետական սեփականություն հանդիսացող այլ հողատեսքի համար 50000 ՀՀ դրամ
- 3) 06-102-0040-0013 ծածկագրով 0,013282 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար 20000 ՀՀ դրամ:

3. Համայնքի ղեկավար Ս. Կոստանոյանին՝ „Ապահով տանիք,, ՍՊԸ-ի հետ կնքել սերվիտուտի պայմանագիր 50 տարի ժամկետով:

Կողմ -14  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ

Դեմ -0                      Ձեռնպահ -0



ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ  
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒԺԱ  
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022թ. Ապրիլի 06  
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1փող. 23, pam-bak@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 42-Ա

**ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ  
ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ,  
ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, „Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, „Հրապարակային սակարկությունների մասին,, ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են բնակավայրերի հասարակական կառուցապատման և գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր 19 լոտով.

- Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0059-0019 ծածկագրով 0,09083 հա բնակավայրերի բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 428000 /չորս հարյուր քսանութհազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0121-0201 ծածկագրով 0,101529 հա գյուղատնտեսական այլ հողամասը: Մեկնարկային գինը սահմանել 20000/քսան հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0120-0130 ծածկագրով 0,573818 հա գյուղատնտեսական՝ 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 345000 /երեք հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0604-0014 ծածկագրով 0,227307 հա գյուղատնտեսական այլ հողատեսք: Մեկնարկային գինը սահմանել 46000/ քառասունվեց հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0604-0015 ծածկագրով 0,280991 հա գյուղատնտեսական այլ հողամաստեսք: Մեկնարկային գինը սահմանել 47000/ քառասունյոթ հազար/ ՀՀ դրամ



- Լոտ 6: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-107-0514-0011 ծածկագրով 0,008626 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 19000/ տասինըհազար/ ՀՀ դրամ
- Լոտ 7: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-107-0514-0017 ծածկագրով 0,007221 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 16000/ տասվեց հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 8: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-015-0124-0004 ծածկագրով 0,078789 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 73000/ յոթանասուն երեք հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 9: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0007-0006 ծածկագրով 0,359159 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 306000/ երեք հարյուր վեց հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 10: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0145-0027 ծածկագրով 0,489508 հա գյուղատնտեսական այլ հողատեսք: Մեկնարկային գինը սահմանել 98000/ ինսունութ հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 11: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0101-0021 ծածկագրով 0,258996 հա գյուղատնտեսական այլ հողատեսք: Մեկնարկային գինը սահմանել 51800/ հարյուր հիսունմեկ հազարութ հարյուր/ ՀՀ դրամ
- Լոտ 12: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-015-0127-0043 ծածկագրով 0,339997 հա գյուղատնտեսական վարելահող 5-րդ կարգ: Մեկնարկային գինը սահմանել 126000/ հարյուր քսանվեց հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 13: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-015-0124-0003 ծածկագրով 0,181206 հա գյուղատնտեսական վարելահող 5-րդ կարգ: Մեկնարկային գինը սահմանել 69000/ վացսունինը հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 14: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0145-0028 ծածկագրով 0,287310 հա գյուղատնտեսական 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 154000/ մեկ հարյուր հիսունչորս հազար / ՀՀ դրամ
- Լոտ 15: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0120-0031 ծածկագրով 1,021743 հա գյուղատնտեսական այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 205000/ երկու հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 16: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0203-0095 ծածկագրով 0,239919 հա գյուղատնտեսական վարելահող 3-րդ կարգ: Մեկնարկային գինը սահմանել 240000 երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 17: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0132-0039 ծածկագրով 0,258996 հա գյուղատնտեսական խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 156000/ հարյուր հիսունվեց հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 18: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0023-0011 ծածկագրով 0,009 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 31000 / երեսունմեկ հազար/ ՀՀ դրամ
- Լոտ 19: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0022-0040 ծածկագրով 0,12 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 405000/ չորս հարյուրհինգ հազար/ ՀՀ դրամ



Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով տրամադրվում է գյուղատնտեսական նշանակության հողամասեր 5 լոտով.

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0592-0002 ծածկագրով 0,336655 հա գյուղատնտեսական վարելահող: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 7000 /յոթ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0252-0006 ծածկագրով 0,0675 հա գյուղատնտեսական այլ հողամաս: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 1000 / հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0127-0008 ծածկագրով 0,400002 հա գյուղատնտեսական արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 12000 /տասերկու հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0101-0016 ծածկագրով 0,18254 հա գյուղատնտեսական այլ: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 1000 / հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0065-0023 ծածկագրով 0,030705 հա գյուղատնտեսական այլ: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

Վարձակալության մրցույթի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

4. Համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանին՝ ապահովել աճուրդով վաճառվող և վարձակալությամբ հատկացվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -14  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ  
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒԺ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0      Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

2022թ. Ապրիլի 06  
գ.Փամբակ



**ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 43-Ա

**ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**

1. Սահմանել Փամբակ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ  
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈՒԱ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0                      Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

2022թ. Ապրիլի 06  
գ. Փամբակ





## ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

### ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒՄԵԼՈՒ

#### Լ.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Փամբակ համայնքում (այսուհետ՝ համայնք) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման հետ կապված հիմնադրույթները և կարգավորումները, մասնավորապես՝ սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) ցուցաբերելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (ընտանիքի) կարիքների գնահատման չափորոշիչները և դրանց համապատասխան միավորները, ընտանիքի կարիքների գնահատման թերթիկի ձևը և սոցիալական աջակցություն տրամադրելու մասին դիմումի ձևը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Հանձնաժողովում ընդգրկվում են՝

- 1) համայնքի ավագանու մինչև երեք անդամ,
- 2) համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից (առկայության դեպքում) մինչև երկու անդամ,

3) սոցիալական աշխատող (հաստիքի առկայության դեպքում),

4) համայնքապետարանի աշխատակազմից մինչև երեք աշխատող

(այն համայնքներում որտեղ առկա չեն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և (կամ) սոցիալական աշխատողի հաստիք, ապա համայնքապետարանի աշխատակազմից մինչև 5 անդամ):

4. Հանձնաժողովում կարող են ընդգրկվել այդպիսի ցանկություն հայտնաձև՝ համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության մինչև հինգ ներկայացուցիչներ:

5. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:



6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

8. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

9. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ոտագիտ կարգով՝ նշանակվելու պահից մեկ տարի ժամկետով:

10. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը (հաստիքի առկայության դեպքում):

11. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

12. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

13. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (առկայության դեպքում) տնօրենները՝ անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

## II. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

14. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները,

2) համայնքում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները,

3) շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

15. Դիմումը (ՏԵ՛ս 2-ում) ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցին անձամբ կամ լիազորված անձի միջոցով (լիազորագիրը կցվում է դիմումին):

16. Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով: Դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով:

17. Դիմումին կամ գրությանը կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը.



2) դիմումատուի սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի բնօրինակը.

3) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին (անհրաժեշտության դեպքում).

4) բժշկասոցիալական փորձաքննական որոշումը, որը փաստում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամության վերաբերյալ կամ հաշմանդամության վկայականը.

5) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (առկայության դեպքում).

6) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից (անհրաժեշտության դեպքում).

7) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնոժին աղետի պատճառած վնաս և այլն)

8) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումին կամ գրության կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

18. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները պատճենահանում է, դրանց վրա կատարում է գրառում բնօրինակների հետ համապատասխանության մասին և փաստաթղթերի բնօրինակները վերադարձնում է դիմումատուին: Սույն մասը չի տարածվում էլեկտրոնային կարգով ներկայացված դիմումների վրա:

Անհրաժեշտության դեպքում վերցվում են փաստաթղթերի բնօրինակները:

19. Փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի համապատասխան աշխատակցի կողմից հանձնվում է սոցիալական աջակցության հարցերը քննարկող հանձնաժողովին:

20. Դիմումները կամ գրությունները՝ ստանալուց հետո մեկ շաբաթյա ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

21. Նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին կամ գրությանը տրվում է համապատասխան ընթացք (անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, տունայցի կատարում, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում):

22. Հանձնաժողովը իրականացնում է հետազոտություն (տնային այցելություն) և կազմում դիմումատուի սոցիալական կարիքների գնահատման ակտ:

23. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել դիմումատուն:

24. Հանձնաժողովի տված եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում կամ գրավոր մերժվում է սոցիալական աջակցության ծառայության տրամադրումը:

25. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:



26. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

### III. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

27. Տունայց կատարելու նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ և կազմում ժամանակացույց, որից հետո իրականացվում է դիմումատուի ընտանիքի կյանքի պայմանների ուսումնասիրություն:
28. Աշխատանքային խումբը այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը (Տե՛ս 2և 1):
29. Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել կրկնակի այցելություն:
30. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):
31. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տունայց կատարելու օրվանից ետոյա ժամկետում, աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:
32. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:
33. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:
34. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար:
35. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:
36. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի(սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողի) հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

### IV. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

37. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ լքափորոշիչներից.
- 1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
  - 2) միայնակմայր - 1 միավոր,
  - 3) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,
  - 4) բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք - 1 միավոր,
  - 5) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)- 2 միավոր (1 միավոր՝ պոտենցիալ ֆինանսական աղքատի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),



6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և (կամ) հաշմանդամ երեխա ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)- 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսականքեռ, 1 միավոր՝ հոգեբանական հրավիճակ),

7) վարձով կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 3 միավոր (1 միավոր՝ ֆինանսականքեռ, 1 միավոր՝ անհրաժեշտագույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական հրավիճակ),

8) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր (1 միավոր՝ ֆինանսականքեռ, 1 միավոր՝ անհրաժեշտագույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական հրավիճակ),

9) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսականքեռ, 1 միավոր՝ հոգեբանական հրավիճակ),

10) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսականքեռ, 1 միավոր՝ հոգեբանական հրավիճակ),

11) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսականքեռ, 1 միավոր՝ հոգեբանական հրավիճակ),

12) միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք - 1 միավոր.

13) հղի կին ունեցող ընտանիք - 1 միավոր

14) անբարենպաստ այլ պայմաններ - 1-ից 5 միավոր

(հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ նմանագետի դիտարկումներով):

38. Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 5 միավոր ստանալու դեպքում:

39. Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միևնույն հասցեում մշտապես բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև՝ միայնակ ապրող անձը:

## Վ. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

40. Աջակցություն

տրամադրելու փաստաթղթերի համրող ջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմումը կամ գրությունը.

2) դիմողի և (կամ) նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) ընտանիքի և (կամ) նրա անդամի սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները.

4) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (ձև 1) - լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.

5) հանձնաժողովի եզրակացությունը.



6) սոցիալական աշխատողի կամ գործը վարող համայնքային ծառայողի հատուկ եզրակացությունը.

7) աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ղեկավարի որոշումը.

8) աջակցությունը դիմողին տրամադրելու փաստը հավաստող փաստաթուղթ:

41. Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր դեպքի համար կազմում է առանձին գործ (սոցիալական գործ) և ապահովում փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանվածությունը:

42. Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Ավարտված գործի էջերը համարակալվում են, գործերը կարվում են և կնքվում համայնքի աշխատակազմի կնիքով:

43. Համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարած սոցիալական աջակցության վերաբերյալ գործերը պահպանվում են նաև էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման կրիչների միջոցով:



**ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ**

Հայաստանի Հանրապետության \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնք

«—» ————— 20—թ.

**Ընդհանուր տվյալներ**

Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն —————

Հասցե —————

Հեռախոս —————

**Ընտանիքի ժողովրդագրական տվյալները**

Անուն, ազգանուն, հայրանուն	Կարգավիճակ	Ծննդյան օր, ամիս, տարի

**Ընտանիքի իրավիճակը**

Իրավիճակ	Նկարագիր
Բնակարանային պայմաններ	
Կոմունալ-կենցաղային և սանիտարա-հիգիենիկ պայմաններ	
Աշխատանքով ապահովվածություն	
Եկամուտներ	
Հազուատով ապահովվածություն	
Մենդով ապահովվածություն	
Առողջապահական կարիքներ	
Այլ	



--	--

### Ընտանիքի սոցիալական կապերը

Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք	
տվյալներ	կարգավիճակ

### Լրացուցիչ տեղեկատվություն

---

---

### Մասնագետի դիտարկումներ

---

---

### Լուսանկարների առկայություն (անհրաժեշտության դեպքում)

--

### Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

N	Չափորոշիչը	Չափորոշիչի համար սահմանված միավորը	Ընտանիքի ստացած միավորը
1	Նպաստառու ընտանիք	1	
2	Միայնակ մայր	1	
3	Ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա	1	



4	Բազմազավակ(չորս և ավելի երեխա ունեցող)ընտանիք	1	
5	Պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)	2	
6	1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և (կամ) հաշմանդամ երեխա ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)	2	
7	Վարձով կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք	3	
8	Արտակարգ իրավիճակից տուժած ընտանիք	3	
9	Դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք	2	
10	Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք	2	
11	Միայնակ չաշխատող թոշակառու	2	
12	Միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք	1	
13	Հղի կին ունեցող ընտանիք	1	
14	Այլ անբարենպաստ պայմաններ	1-5	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>			

Աշխատանքային խմբի անդամների տորագրությունները







**Ներկայացվող փաստաթղթերի ցանկ՝**

№	Փաստաթղթի անվանումը	Կցված է (կատարվում է/ նշում)
1.	Դիմում՝ լրացված սահմանված ձևով	
2.	Անձը հավաստող փաստաթղթի պատճենը	
3.	Սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը	
4.	Տեղեկանք բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին	
5.	Հաշմանդամության վկայականի կամ բժշկասոցիալական փորձաքննականորոշման պատճենը	
6.	Բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ անբուժանքի քարտից քաղվածք	
7.	Սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթղթի պատճենը՝ տրված սոցիալական ապահովության մարմնի կողմից	
8.	Այլ	

Ատորագրելով այս դիմումը՝ չեմ առարկում և տրամադրում եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման համար:

Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:

Ցանկանում եմ ծառայության տրամադրման հետ կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ

ռազմավարական փոստի միջոցով

օստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով

օպատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Դիմող՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

\_\_\_\_\_   
(դիմումատուի անուն, ազգանուն)



## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« \_\_\_\_\_ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» \_\_\_\_\_ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

\_\_\_\_\_ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված կարգավորումների համատեքստում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սոցիալական աջակցության տրամադրումը դիտարկվում է որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար նաև համայնքի կամավոր խնդրի լուծմանը միտված սեփական լիազորություն:

Վերը մեջբերվածի համատեքստում, հարկ է անդրադառնալ համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծմանը միտված սեփական լիազորությունների սահմանադրական կարգավորումներին: Այսպես՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի, համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական լիազորությունները միտված են լուծելու համայնքի պարտադիր և կամավոր խնդիրները:

Սահմանադրական վերը մեջբերված նորմով միաժամանակ սահմանվում է, որ համայնքի կամավոր խնդիրները սահմանվում են համայնքի ավագանու որոշումներով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումները ցույց են տալիս, որ օրենսդիրը համայնքում սոցիալական աջակցության տրամադրումը դիտարկել է որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար օրենսդրական իմպերատիվ պահանջ է սահմանել, որ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծումը իրականացվի ավագանու կողմից սահմանված չափորոշիչների հիման վրա:

Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչների մշակման համար հիմք են հանդիսացել նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 18-րդ հոդվածի դրույթները:

Միաժամանակ, օրենսդրական կարգավորումների զատ, հարկ է անդրադառնալ նաև համայնքում իրականացվող սոցիալական աջակցության տեղական քաղաքականությանը, կամ որ նույնն է՝ իրավակիրառական պրակտիկային:



Ըստ էության համայնքում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները նորմատիվ իրավական կարգավորումների իմաստով կանոնակարգված չեն, ինչի պայմաններում համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները բազմաթիվ դեպքերում, առավելապես՝ համայնքում իրավական հսկողության և հաշվեքննության իրականացման գործընթացներում, դիտարկվում են որպես ոչ իրավաչափ:

Սույն որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը նրանում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանու համար նախատեսվել է պարտավորություն, առանձին նորմատիվային բնույթ կրող որոշմամբ սահմանելու համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդրի լուծման չափորոշիչները:

Բացի օրենսդրական պահանջի իրագործման անհրաժեշտությունից, առկա է նաև իրավակիրառական անհրաժեշտություն և նպատակահարմարություն, համայնքային մակարդակում կարգավորելու համայնքի բյուջետային միջոցների հաշվին սոցիալական աջակցություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները, սահմանելով այդ իրավահարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը միտված ընթացակարգերը և ենթաօրենսդրական կառուցակարգերը:

Նախագծի կարգավորման առարկայի շրջանակներում, առաջարկվում է սահմանել այն չափորոշիչները և ընթացակարգերը, որոնց համաձայն կիրականացվի համայնքում սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը:

Նախագծով սահմանվում է, որ սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը ապահովելու համար՝ որպես համայնքի կամավոր խնդրի լուծմանն ուղղված ավագանու սահմանած սեփական լիազորություն, համայնքի ղեկավարի կողմից ստեղծվում է մշտական գործող հանձնաժողով:

Նախագծով սահմանվում են նաև հանձնաժողովի գործունեության ընթացակարգերը, ուսումնասիրությունների կազմակերպման, եզրակացությունների տրման, որոշումների կայացման կարգը, սոցիալական փաթեթում ընդգրկվող անհրաժեշտ փաստաթղթերի կազմը: Սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած անապահով ընտանիքի (անձի) կարիքների գնահատման համար առաջարկվում է սահմանել միավորային հետևյալ համակարգը՝

- ⇒ նպաստառու ընտանիք - 1 միավոր,
- ⇒ միայնակ մայր - 1 միավոր,
- ⇒ ամուսնալուծված կին կամ տղամարդ - 1 միավոր,
- ⇒ բազմանդամ ընտանիք - 1 միավոր,
- ⇒ բանակում գինվոր - 2 միավոր,



- ⇒ ընտանիքի անդամի 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն - 2 միավոր,
- ⇒ քնակվում են վարձով կամ վագոն-տնակում - 3 միավոր,
- ⇒ արտակարգ իրավիճակից (քնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր,
- ⇒ ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր,
- ⇒ հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհվածի (անհետ կորածի) կամ ռազմական գործողությունների ժամանակ հաշմանդամ դարձած անձի ընտանիք - 2 միավոր,
- ⇒ միայնակ թոշակառու - 2 միավոր,
- ⇒ անբարենպաստ այլ պայմաններ - 5 միավոր (հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

Աջակցություն կարող է ցուցաբերվել նվազագույնը 5 միավոր ստանալու դեպքում: Նախագծով առաջարկվում է հաստատել նաև ընտանիքի գնահատման թերթիկի ձևը (Ձև 1): Միաժամանակ, Նախագծի Ձև 2 հավելվածով ներկայացվում է սոցիալական աջակցության տրամադրման վերաբերյալ դիմումի օրինակելի ձևը, որը համայնքապետարանի կողմից կարող է կիրառվել դիմումներ ընդունելու ժամանակ:

Համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու չափորոշիչները սահմանելու մասին ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Նախագծի ընդունման արդյունքում սոցիալական աջակցության տրամադրման վերաբերյալ համայնքի կամավոր խնդիրների լուծումը համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարող է իրականացվել ենթաօրենսդրական նորմատիվ կարգավորումների համատեքստում, ինչը հնարավորություն կընձեռի թե՛ համայնքի ղեկավարի և թե՛ համայնքի աշխատակազմի պաշտոնատար անձանց համար, գործելու քաղաքացիական իրենց վերապահված լիազորությունների և գործառույթների շրջանակներում, ապահովելով սոցիալական աջակցության տրամադրման գործընթացներում օրինականության պահպանումը:



## ՏԵՂԵԿԱՆՔ

«\_\_\_\_\_ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» \_\_\_\_\_ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«\_\_\_\_\_ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» \_\_\_\_\_ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

«\_\_\_\_\_ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» \_\_\_\_\_ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ \_\_\_\_\_ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«\_\_\_\_\_ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» \_\_\_\_\_ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ \_\_\_\_\_ համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ \_\_\_\_\_





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 44-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Փամբակ համայնքի  
ավագանին.

## ՈՐՈՇՈՒՄ Է

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022թ-ի  
մայիսի 12-ին ժամը 13.00:

Կողմ -14  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ  
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022թ. Ապրիլի 06  
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ